## ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

# ՎԵՐԱԴԱՐՁ՝ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՎ

Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստի մասին խորհրդածելիս ակամա հիշում ես նրա ստեղծագործական կենսագրության նշանակալից մի փաստը։ 1959 թվականին, Վիեննայի երիտասարդական համաշխարհային փառատոնին «Ուսանողուհու դիմանկարը» գրաֆիկական աշխատանքի համար նա արժանացավ բրոնզե մեդալի։ Հետագայում Ռ. Խաչատրյան բազմիցս մասնակցել է հանրապետական, միութենական ու միջազգային ցուցահանդեսների, գրաֆիկային զուգընթաց ստեղծել է գեղանկարչական գործեր, որոնց թվում մի շարք թեմատիկ կոմպոզիցիաներ։ Հիշենք դրանցից «Ամբոխները խելագարված», «Վերածնունդ», «Մայրություն», «Երիտասարդություն» կտավները։ Վերջին երկուսի համար երիտասարդ հեղինակն արժանացավ հանրապետության երիտասարդական կազմակերպության երկրորդ մրցանակին (1965)։ Ավելի ուշ, 1969-ին, Կոմիտասի գրաֆիկական դիմանկարը, որ ներկայացվել էր մեծ կոմպոզիտորի 100-ամյակին նվիրված ցուցահանդեսին, ստացավ Հայաստանի կուլտուրայի մինիստրության առաջին մրցանակը։

Ռ. Խաչատրյանի ստեղծագործական ուղին սկսվեց խոր հետաքրքրությամբ դեպի երիտասարդությունը։ Նոր սերունդը՝ իր խոհերով ու ապրումներով, իղձերով ու երազանքներով վերջին գործերում հանդես է գալիս իբրև պատկերման գլխավոր առարկա։ Կինոօպերատոր Ս. Ֆիլիպովի, դերասան Լ. Բուռլյաևի, բանաստեղծ Ռ. Դավոյանի, նկարչի կնոջ և այլ դիմանկարներում արվեստագետը դիպուկ միջոցներով դիտողին հաղորդակից է դարձնում իր հերոսների ներաշխարհին։ Անշուշտ պիտի նսեմանար այդ աշխատանքների գեղագիտական արժեքը, եթե նա սահմանափակվեր իր կերպարների սոսկ հոգեկանի բացահայտմամբ։ Յուրաքանչյուր դիմանկարում Խաչատրյանը հետամուտ է գումարելու նաև «իրենը»։

Պատկերների կառուցվածքի մեջ չի նկատվում ինչ որ մտացածին բան։ Իր բնորդներին նկարիչը ներկայացնում է նրանց հատկանշական կեցվածքով։ Գլխավորը և ամենից աչքի ընկնողն այստեղ գծանկարն է։ Նկարիչը հազվադեպ է դիմում ծավալի զգացողություն առաջացնող ստվերումների։ Ամեն ինչ սկսվում ու ավարտվում է լոկ գծով։ Խաչատրյանի գիծը ծայր աստիճան նուրբ է, սահուն երգային։ Յուրաքանչյուր դիմանկարի մեջ հատուկ խնամք է տարված գծի հնչողական ուժը թղթի ճերմակ հարթության հետ ներդաշնակելու, գծանկարի ընդհանուր կատարելությունն ու ավարտվածությունը պահպանելու համար։ Հետաքրքիր է, որ այս հատկությունների շնորհիվ գծանկարներն ընկալվում են իբրև մարմարի վրա դասական շնչով կատարված բարձրաքանդակներ։

Ինքը՝ նկարիչը չի խուսափում դասական արվեստի հետ ունեցած հարազատությունից։ Դա նրա դավանանքն է, անհուն սերն ու հավատը բնության իբրև ամենահրաշալի ու հավերժական ստեղծագործության հանդեպ, որի մարմնավորման անկրկնելի օրինակները գեղարվեստի մեջ տվել են դասականները։ Եվ եթե հիշենք, որ ժամանակակից արվեստն իր ձևական անսահմանափակ որոնումներից, պայմանականության ու վերացականության ծայրահեղ դրսևորումներից հետո նորից է ձգտում արվեստին վերադարձնել նրա մարդկային խորքը, ապա դյուրըմբռնելի կդառնա, թե որքան բարձրանում է դասական ու հատկապես վաղ դասական արվեստի նշանակությունը այսօրվա արվեստագետների ինքնարտահայտման նոր ձևերի մշակման մեջ։

Կրկին վերհիշելով Ռ. Խաչատրյանի անդրանիկ գործերը, գտնում եմ, որ գնալով դեպի բովանդակության խորություն, առավել ցայտուն մարմնավորում տալով իր ինքնուրույն արտահայտչական լեզվին, նկարիչը ինչ որ չափով կորցնում, կամ, ավելի ճիշտ, անտեսում է կարևոր մի հատկանիշ՝ արվեստի երկին կենսունակություն հաղորդող անմիջականությունը։ Մի բան, որ ընդհանրապես կերպարվեստի ժամանակակից ըմբռնման ամենաբնորոշ գծերից է։ Սակայն չի կարելի մոռանալ, որ անմիջականությունը, հուզական պոռթկումը, բանաստեղծական ներշընչանքը առհասարակ խորթ հատկանիշեր չեն Խաչատրյանի համար և, վաղ թե ուշ, ամբողջ ձայնով խոսելու են նրա նկարներից...

Ռ. Խաչատրյանը ճանաչում է գտել որպես խորհրդահայ գրաֆիկայի ինքնատիպ ներկայացուցիչներից մեկը, օժտված գծանըկարի բարձր կուլտուրայով։ Մոսկվացի նկարիչ Մ. Միտուրիչը խոսելով նրա մասին, գրում է. «Խաչատրյանը ինձ ներկայանում է որպես բարդ և անսպասելի բաների ընդունակ արվեստագետ, ընդամենը մի քանի տարի ստեղծած գործերի համեմատությամբ անգամ Խաչատրյանի աշխատանքները անսպասելի հայտնություն են, իրոք առաջընթաց քայլ։ Նրանք շատ արագ արժանացան համընդհանուր ուշադրության իրենց կատարման վարպետությամբ, անկեղծությամբ»։ Ահա այդ էլ խոր հավատ է ներշնչում նրա ստեղծագործության ապագայի նկատմամբ։



«Աղջիկ պատուհանին մոտ»
Գործ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ-ի



Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ — Ինքնանկար

Շ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

K" — (VIAȚA NOUĂ) Săptămînal politic-economic-social-cultural în limba armeană — Redacția și administrația: București, Str. Armenească nr. 13 Sectorul 2 — Tel. 14.67.83 Tiparul I. P. „13 Decembrie 1918"
րցողները, որոնք կփափագին բաժանորդագրվել «Նոր կյանք»-ի, կրնան դիմել հետևյալ հասցեին — „ROMPRESFILATELIA" — Serviciul Import-Export Press-București — Calea Griviței nr. 64—66 P.O.B.—2001
40.282